ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«18» 02 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000016

Ձեռնարկողը՝ ***«Գրին Հիլզ» ՍՊԸ***
Ք. Երևան, Նոր Նորքի 2-րդ փող., փ. 42

Գործունեությունը՝ ***Դավիթ Բեկ փողոց N103/5 հասցեում նախատեսվող բնակելի թաղամասի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Երևան քաղաք

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Դոնոյան

Առդիր եզրակացությունը՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

թիվ ԲՓ 000016

'18' 02 2020թ.

Երևան քաղաքի Դավիթ Բեկ փողոց N103/5 հասցեում նախատեսվող բնակելի թաղամասի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս.

Ձեռնարկող՝	«Գրին Հիլզ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Նախնական գնահատման հայտ Գ կատեգորիա
Տեղադրման վայրը՝	ք. Երևան, Նոր Նորքի վարչական շրջան

Նախագծումն իրականացվել է համաձայն 11.12.2019թ. Երևանի քաղաքապետի կողմից հաստատված N-01/18-07/2-102767-1278 նախագծային թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանքի): Նախատեսվող գործունեության հողատարածքը գտնվում է ք. Երևան Նոր Նորք վարչական շրջան Դ. Բեկ փողոցի թիվ 103/5 հասցեում՝ բնակելի և հասարակական շենքերի հարևանությամբ: Համաձայն սեփականության վկայականի՝ կադաստրային ծածկագիր 01-008-0626-005՝ հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, իսկ գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման:

Հատկացված տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 5506.7մ^2: Նախատեսվում է կառուցել 2 բազմաբնակարան՝ 4-5 հարկանի և 3 անհատական՝ երկհարկանի մասնաշենքերով բնակելի թաղամաս:

Նկարագրական մաս. 1-ին բնակելի մասնաշենքը կազմված է երկու տիպարային (44,6x17,3մ չափսերով) միմյանց կպած մասնաշենքերից: Մասնաշենքերը կազմված են 5 բնակելի մասից և 1 կիսանկուղային ավտոկայանատեղիից (նախատեսված 47 մեքենայի համար), ընդհանուր՝ 32 բնակարաններով: Մասնաշենքի տանիքը հարթ է, իսկ ավտոկայանատեղերի տանիքը մասամբ ունի խոտածածկույթ:

2-րդ բնակելի մասնաշենքը հատակագծում ուղղանկյուն է և ունի 67,6x12,8մ չափսեր: Մասնաշենքերը կազմված են 4 բնակելի մասից, 1 և 2 կիսանկուղային ավտոկայանատեղիներից (նախատեսված 47 մեքենայի համար), ընդհանուր՝ 36 բնակարաններով: Մասնաշենքի տանիքը հարթ է:

3 անհատական բնակելի տները հատակագծում ունեն 10.5x13.5մ չափսեր: Բնակելի տները երկհարկանի են և տարածքի խիստ ռելիեֆայնությամբ պայմանավորված, առաջանում են նկուղային հատվածներ:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ENVIRONMENTAL IMPACT ASSESSMENT CENTER SNCO RA YEREVAN 02543163 ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

Մասնաշենքերի կոնստրուկտորական համակարգը կարկասային է՝ միաձույլ երկաթբետոնից:

Արտաքին Ճակատները նախատեսվում է երեսապատել տուֆե, կամ տրավերտինե սալերով և սվաղել ցեմենտ ավազային շաղախով՝ ներկված ֆասադային ջրակայուն ներկերով: Նախատեսվում է իրականացնել արտաքին կոնստրուկցիաների ջերմամեկուսացում: Ցոկոլային մասը նախատեսվում է երեսապատել անկանոն քարե շարվածքով: Շինարարության ընդհանուր տևողությունը կկազմի 2 տարի:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումը իրականացվելու է տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ, որի համար ընկերության կողմից մշակվել է համապատասխան բարեկարգման, կանաչապատման և արդիականացման դենդրոնախագիծ:

Կառույցի տեխնիկա-տնտեսական ցուցանիշներն են՝

- հողամասի ընդհանուր մակերես՝ 0.55067հա կամ 5506.7մ^2,
- շինություններ՝ 2202 .0մ^2,
- ավտոմոբիլային ճանապարհներ՝ ասֆալտբետոնե ծածկույթ՝ 990.0մ^2,
- հետիոտնի մոտեցումներ՝ 130.0մ^2,
- կանաչապատման ընդհանուր տարածք՝ 2184.7մ^2, որց կանաչապատ տանիքներ՝ 1585.0մ^2:

Շինաշխատանքների ընթացքում առաջացող շինարարական աղբն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Որպես շինհրապարակ դիտարկվելու է ամբողջ հողատարածքը: Տարածքի մակերևութային ջրերի հեռացումը նախատեսված է ինքնահոս տարբերակով:

1-ին և 2-րդ մասնաշենքերի տանիքների ջրահեռացումը նախատեսվում է իրականացնել ներքին ջրհորդանների միջոցով և համաձայն տեխնիկական պայմանների, արտաքին ստորգետնյա խողովակներով՝ միացնելով Դավիթ Բեկ փողոցի քաղաքային անձրևատար ցանցին :

3-րդ մասնաշենքերի տանիքների ջրահեռացումը նախատեսվում է իրականացնել ներքին ջրհորդանների միջոցով՝ հեռացնելով դեպի արտաքին խոտածածկույթ: Ավտոկայանատեղիների հատակին նախատեսվում է տեղադրել ջրընդունիչներ, որոնք միացված կլինեն անձրևատար ցանցին:

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը կիրականացվի շինհրապարակից դուրս՝ լցակայաններում կամ սպասարկման կետերում: Բնակելի թաղամասի նախագիծը ենթադրում է նաև հողային աշխատանքների իրականացում: Ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 4002.76մ^3 ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ, որից 640.05մ^3 ծավալը կօգտագործվի որպես հետլիցք, իսկ ավելցուկային 3362.71մ^3 ծավալը՝ տարածքի բարեկարգման և հարթեցման համար:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքերի ընթացքում կենցաղային աղբն է՝ 100.0-120.0կգ, որը պայմանագրային հիմունքներով կտեղափոխվի մոտակա աղբավայր և շինարարական աղբը՝ 1100.0մ^3, ինչը տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար և շինանձնակազմի խմելու, կենցաղային նպատակների համար: Ջրօգտագործման ընդհանուր ծախսը կկազմի 464.04մ^3/շին. ժամ: Բնակելի թաղամասի

ջրամատակարարումը և ջրահեռացումն իրականացվելու է համաձայն «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի. ջրամատակարարումը կիրականացվի Դ. Բեկ փողոցով անցնող ջրատարից, իսկ կոյուղին կմիացվի համայնքային կոյուղատարին:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո տարածքից հեռացվող և հատուկ վայրում պահեստավորվող հողաբուսաշերտը՝ 850.0մ³ ծավալով, կօգտագործվի տարածքի կանաչապատման և բարեկարգման նպատակով: Համաձայն նախագծային տվյալների, նախատեսվող կանաչապատման ընդհանուր մակերեսը կազմելու է 2184.7մ²: Կանաչապատման ծրագիրը իրականացնելու համար ստեղծվելու է 30.0սմ հաստությամբ արհեստական մակերեսային հողային շերտ՝ սիզամարգերի և ծաղկային օջախների համար: Թփերը և ծառատեսակները տնկելու և նրանց կպչողականությունն ապահովելու համար անհրաժեշտություն է առաջանում ձեռք բերել ևս 800.0մ³ ծավալով սևահող, համապատասխան քանակությամբ տորֆ և կարմիր ավազ: Կանաչապատումը նախատեսվում է իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմանների բնորոշ ծառաթփային բուսականությամբ, մասնավորապես՝ հուդայածառ – 22 հատ, կաղնի – 24 հատ, կիպրոս փայլուն – 200 հատ, գիհի – 70 հատ:

Կանաչապատ տարածքների, ներառյալ ավտոկայանատեղիների տանիքի մասամբ խոտածածկ՝ 1585.0մ² մակերեսի ոռոգումը կիրականացվի տարածքի հարևանությամբ անցնող ոռոգման ցանցի միջոցով: Այն տեղամասերը, որոնք ենթակա են հնարավոր ազդեցության, տնկված ծառաթփուտային բուսականության բարձր աճը և կպչողականությունն ապահովելու նպատակով նախատեսվում է իրականացնել մոնիթորինգ: Բնապահպանական բոլոր միջոցառումները ներառված են շինարարության նախահաշվի մեջ և կիրականացվեն շինարարական կազմակերպության կողմից: Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան մասնահանել 350.0հազ. դրամ, ամբողջ շինարարաության ընթացքում՝ 750.0հազ. դրամ:

Պատճառաբանական մաս: Վերլուծելով ներկայացված նախնական գնահատման հայտի տեղեկատվությունը, շրջակա միջավայրի նախարարության համապատասխան ստորաբաժանումներից ստացված կարծիքները, փորձաքննական գործընթացում առաջարկությունների և դիտողությունների հիման վրա կատարված լրամշակումները, Երևանի քաղաքապետարանի և Նոր Նորք վարչական շրջանի տարածքում իրականացված հանրային քննարկումների արդյունքները՝ կարելի է անել հետևյալ եզրահանգումները.

Շինարարական աշխատանքների ժամանակ առաջացող արտանետումները կունենան ժամանակավոր բնույթ և կարտանետվեն հարթակային աղբյուրներից:

Նախատեսվող գործունեության շինարարության և շահագործման ընթացքում նախնական գնահատման հայտում նախատեսված միջոցառումների արդյունքում տարածքի աղտոտվածությունը՝ շրջակա միջավայրի բոլոր բաղադիչներով, կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում: Ըստ հայտի՝ լուծված են կեղտաջրերի հավաքման և հեռացման, աղբահեռացման, մթնոլորտի աղտոտվածության նվազեցման, աղմուկի մակարդակի, բարեկարգման և կանաչապատման հարցերը: Նախատեսված են շրջակա միջավայրի բարելավմանն ուղղված բավարար միջոցառումներ:

Այսպիսով, հիմք ընդունելով վերը նշվածը, ինչպես նաև իրականացվող աշխատանքների ծավալները, խախտվող տարածքի սահմանափակ մակերեսը, մշակված բնապահպանական միջոցառումները և մշտադիտարկման իրականացման պլանը՝ կարելի է

ենթադրել, որ նախատեսվող գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա կունենա կարճատև և նվազագույն ազդեցություն՝ չգերազանցելով սահմանված նորմերը:

Փորձաքննական պահանջներ

1. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական միջոցառումների և մշտադիտարկումների կատարմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր կարգով պահպանելով բնապահպանական, կառուցման և շահագործման հետ կապված բոլոր նորմերը:
2. Նախատեսվող շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է իրականացնել և ավարտել օրվա սահմանված ժամին՝ բնակելի տարածքներում աղմուկի և առավելագույն բեռնվածությամբ աշխատանքային ժամերի ավելացումից խուսափելու համար:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Գրին Հիլզ» ՍՊԸ կողմից ներկայացված Երևան քաղաքի Դավիթ Բեկ փողոց N103/5 հասցեում նախատեսվող բնակելի թաղամասի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ Կ. Մովսիսյան